

նկատմամբ, եւ իր մտքին մէջ, ինչպէս արեւելեան Հայրերու մօտ, պոռնկութեան կամ անհաւատարմութեան պարագային ամուսնութիւնը լուծելու կարելիութիւնը՝ պատժական միջոց մըն էր, անկէ ըզգուշացնելու համար ամուսինները: Եւ այդ տեսակէտով գուցէ բաւական ազդու միջոց եղած ըլլալու էր պարզ ժողովուրդին մօտ, որ բնական կեանքը կ'ապրէր եւ որուն մօտ պատուի զգացումն ալ աւելի զօրաւոր էր, քան իշխաններու եւ ազնուականներու մօտ՝ անցեալին, եւ ինչպէս այսօրուան քաղքենի եւ բարեկեցիկ ընկերութեան մէջ:

Նամակին երկրորդ մասը ուղղուած է եպիսկոպոսին, որուն կը յանձնարարէ օրինակ հանդիսանալ՝ իր բարի վարքով՝ հաւատացեալներուն եւ քահանաներուն. անոր կը յիշեցնէ ըստ այն առաքինութիւնները՝ որոնց մէջ պէտք է փայլի եպիսկոպոսը, ինչպէս են՝ արդարութիւնը, խոնարհութիւնը, հեղութիւնը, Աստուծոյ երկիւղը եւ սէրը, մարդասիրութիւնը, աղքատասիրութիւնը, ողորմածութիւնը, որոնց հետ նաեւ պահեցողութիւնը, աղօթքը եւ ճշնողական հրահանգները, որոնցմով պէտք է յառաջադիմէ երկնաւոր առաքինութիւններու մէջ: Բնականաբար Ներսէս կը գրէ ինչ որ սրտէն կը բղխի եւ կ'արտայայտէ իր ամէնօրեայ անձնական պարտւած: Բայց եպիսկոպոսին կամ առաջնորդին համար բաւարար չէ օրինակ հանդիսանալ, հարկ է որ շարունակ խօսի եւ խրատէ ժողովուրդը՝ Աստուծոյ օրէնքին հպատակելու եւ սորվեցնէ աստուածային պատգամները, աճեցնելով օրըստօրէ Բրիստոսի հօտը: Եւ հուսկ կը զգուշացնէ նորընտիր եպիսկոպոսը դայթակղութեան առիթ տալէ, թուարկելով այն արարքները՝ որոնք կ'երեւի թէ ընդհանրացած էին այդ շրջանին, եւ կը յայտնեն մեզի թաղաւորական քաղաքին անկեալ բարեքերը:

Ահա Ներսէս Շնորհալիի հովուական գործելակերպը եւ գործունէութիւնը, որ իսկապէս ուղեցոյց մըն է ամէն ժամանակներու՝ Հայ Եկեղեցւոյ հովիւներուն: Ան ոչ միայն քաջ հովիւ մը կը հանդիսանայ, այլ նաեւ ողորմած հայր մը, ներհուն դաստիարակ մը, հնարամիտ բժիշկ մը, անձանձրոյթ ուսուցիչ եւ վարդապետ մը, արդարամիտ եւ խոհական դատաւոր մը, անվեհեր առաջնորդ մը, որ իր օրինակով կ'առնի ճշմարտութիւնները, եւ կը դառնայ ընդունելի միջնորդ մը Աստուծոյ եւ իր ժողովուրդին միջեւ:

(Շար. 8)

Հ. ՊՕՂՈՍ ԱՆԱՆԵԱՆ

POUR UNE NOUVELLE ÉDITION DE LA VERSION ARMÉNIENNE DES «DÉMONSTRATIONS» D'APHRAATE

Aphraate, surnommé le «Sage Persan», et même Jacques dans deux manuscrits syriaques¹, est le plus ancien des Pères syriaques dont l'œuvre nous soit conservée intégralement. Il serait né entre 260 et 275 et serait mort peu après 345, au temps de Sapor II. Nous possédons peu de données sûres à son sujet². Il a composé 23 «Démonstrations» ou Lettres, dont les 22 premières sont rangées selon les initiales de leurs premiers mots, dans l'ordre alphabétique du syriaque, et la 23^e aurait été ajoutée après coup; les dix premières sont datées par l'auteur des années 336-337, les Lettres 11 à 22, des années 343-344 et la dernière, de 345³. Ces lettres, précédées d'un mot à un ami in-

1. BM Add. 17.182, fol. 174^r et BM Orient. 1017, fol. 159^r.
2. Sur Aphraate et son œuvre, voir J. PARISOT, *Aphraatis Sapientis Persae Demonstrationes* (Patrologia Syriaca, I, 1), Paris, 1894, p. IX-LXXX (= PARISOT, *Aphraates*); A. BAUMSTARK, *Geschichte der syrischen Literatur*, Bonn, 1922, p. 30-31; O. BARDENHEWER, *Geschichte der altkirchlichen Literatur*, IV, Fribourg-en-Brigau, 1924, p. 327-340; I. ORTIZ DE URBINA, *Patrologia Syriaca, alt. editio*, Rome, 1956, p. 46-51; B. ALTANER, *Précis de Patrologie*, adapté par H. Chirat, Mulhouse, 1961, p. 491-492; J. PARISOT, art. *Aphraate*, dans *Dictionnaire de Théologie Catholique*, I, 2 (1931), col. 1457-1463; F. NAU, art. *Aphraate, le Sage*, dans *Dictionnaire d'Histoire et de Géographie ecclésiastiques*, 3 (1924), col. 936-939; I. ORTIZ DE URBINA, art. *Aphraate*, dans *Lexikon für Theologie und Kirche*, 1 (1957), col. 687-688.
3. Il faut cependant noter que le R. P. Fiey conteste ces dates; voir J. M. FIEY, *Notule de littérature syriaque. La Dém. 14 d'Aphraate*, dans *Le Muséon*, 81 (1968), p. 449-454. Il considère la Lettre 14 (De Exhortatione) comme la Lettre indépendante; pour lui, les Lettres 1-10 sont des années 336-337, les Lettres 11 à 23, des années 344-345 et la Lettre indépendante 14 serait antérieure à l'année 329.